



# ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԷՃ ԼՐԱՏՈՒ

Ի տարի

Թիւ 1



## ՅՈՒԲԵԼԵԱՆՆԵՐԷՆ ԵՏՔ..


*Գոկար Արմէն Իւրնէշլեան*

Ուրախատի՞ք տարեդարձներով լի տարի մը կը գոցենք: Նշեցինք Երեւանի հիմնադրութեան 2800-ամեակը, Հայաստանի Հանրապետութեան եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան հարիւրամեակները, դպրոցիս ինստիտուցիոնալ ամեակը եւ այլ յիշարժան տարեթիւեր:

Պէ՛տք են այս նշումները, պէ՛տք են բոլորին, որովհետեւ անցեալի իրագործումներուն նշումը կը վերահիմնաստատուրէ այսօրը, առիթ կը դառնայ ինքնարժեքներու մի եւ ծրագրումի, որպէսզի հրավառութիւններէն, հանդիսութիւններէն ու քաղցր խօսքերէն ետք ու վեր շօշափելի ու իմաստալից բան մը մնայ այդ ամբողջ եռուզեռէն:

Հայ Աւետ. Գոլէճը երեք ամիս առաջ դիմաւորեց իր 96-րդ տարեշրջանը, իսկ հիմա կը դիմաւորէ 2019 տարին այն նոյն վճռակամութեամբ, որով դիմաւորած է նախորդ 95 տարիները: Կը շարունակենք ծառայել հայ աշակերտին, նպաստելով անոր հոգիի, միտքի ու մարմնի աճին, ապաւինելով Աստուածաշունչի լոյսին ու ազգային եւ մարդկային արժէքներու:

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ եւ ՕՐՀՆԱԲԵՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ





## ՀՈՒՐԻ ԱՔԱՐՂԵԱՆԻՆ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՈՒՇԱԳՐԱԻ ՀԱՄԵՐԳՈՆ ԱՌԻԹՈՎ

*Կամիլա Երկանեան-Քէշիշեան*

ՀԱԳ-ի հիմնադրութեան 95-ամեակին առիթով, Հայ Աւետարանական Ա. Եկեղեցւոյ սրահին մէջ, Ուրբաթ, 16 Նոյեմբերին Զուիցերիայէն իր ճազ նուագախումբին հետ ժամանած Հուրի Աքարդեան-Ֆրիտլիի համերգը իր տեսակին մէջ աննախընթաց էր եւ սրահը բերնէ-բերան լեցուցած երաժշտասէրներու յիշողութեան մէջ անջնջելի պիտի մնայ ապահովաբար:

Հալէպահայ երգչուհին, որ ճազային արուեստի իր երաժշտական կազմաւորումը ստացած է Ֆրանսա նախապէս յաճախակի ելոյթներ ունեցած է Լիբանանի մէջ: Այս համերգը, սակայն, ուշագրաւ էր ճազային արհեստավարժ իր եռեակով՝ դաշնակահար, երաժշտահան Օլիվըր Ֆրիտլի, կրկնաթաւահար (քոնթրաբաս) Անտրէ Փուսա եւ հարուածային նուագարաններու մեկնաբան Բիուս Պաշնակըլ, որոնք ստեղծեցին գործիքային գեղեցիկ համադրում մը, կամ, այլ խօսքով, եռամիասնութիւն մը, որով հանդիսականին հրամցուցին հայկական ժողովրդական երգերու ճազային մեկնաբանութիւններ, ճազային հանրայայտ էջերէ ընտրանի մը, ինչպէս նաեւ Օլիվըր Ֆրիտլիի եւ Հուրի Աքարդեանի ստեղծագործութիւններէն փունջ մը:

Նուագախումբի երեք երաժիշտները, առանձնաբար, կը գտնուէին իրենց ժանրին արհեստավարժութեան կատարելագործումին մէջ, բայց մանաւանդ գնահատելի էր անոնց նրբաճաշակ զգացողութիւնը մեկնաբանուած իւրաքանչիւր ստեղծագործութեան նկատմամբ, եւ ունէին երաժշտական հաւաքական կերպար կերտելու համադրական մեծ վարպետութիւն:

Այս բոլորին զուգահեռ, համերգի ամբողջ տեսողութեան, եռեակը եղաւ վստահելի ու բարձրորակ նուագակից՝ երգչուհին:

Ուշագրաւ էր, որ հանրաճանօթ ճազային ստեղծագործութիւններու կատարումին կողքին, երաժիշտները բարձր ճաշակով մշակած ու համադրած էին հայկական թեմաները:

Իր բեմականութեամբ եւ յուզականութեամբ, ինչպէս նաեւ ձայնի արտակարգ տիրապետմամբ օժտուած հայուհի Հուրի Աքարդեան-Ֆրիտլի իր այս համերգով անգամ մը եւս հաստատեց ինքզինք, նախ իբրեւ հայ իրականութեան ամէնէն վաւերական ճազոլորտի երգչուհիներէն մէկը, որ դուրս կու գայ հայկական շրջանակներէ եւ կրնայ բարձրագոյնս ներկայանալ այդ ոլորտի բոլոր միջավայրերուն մէջ: Դոյզն իսկ չզիջելով հանրաճանօթ ռեւէ կատարողի, եւ ապա, իր ներշնչումն ու երգացանկի ընտրութիւնը կատարելով հայ երաժշտական գանձարանի ամէնէն վաւերական նմուշներէն, Հուրի արդի գոյներով, նորովի կը մատուցէ զանոնք, օտար միջավայրերու մէջ տարածելով հայ երգը, այսպիսով ստեղծելով երաժշտական արժանահաւատ կամուրջ մը ո՛չ միայն հինին ու նորին, այլեւ հայկականին ու համամարդկայինին միջեւ:

Հրաշալի ու բարձրարժէք կատարում, նրբաճաշակ ու արհեստավարժ մշակումներ, բեմական անմիջականութիւն եւ հմայք, յուզառատ երաժշտականութիւն եւ երգչուհիի ձայնային ու կատարողական իւրայատկութիւն: Այս փունջը եղաւ գլխաւոր ստորոգելիները հայ դպրոցի յարկին տակ տրուած իւրատեսակ երաժշտական երեկոյին, իսկ բոլոր ներկաներուն ու կազմակերպիչներուն երախտիքի մարմնացումը եղան վարժարանի տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեանի եւ հոգաբարձութեան ատենապետ պր. Ներսէս Պաղտոյեանի կողմէ արուեստագէտներուն յանձնուած յուշանուէրները:



## ՀԱՅ ԱՒԵՏ. ԳՈՒԼԵՃԻ 95- ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Շաբաթ, 17 Նոյեմբեր 2018-ին, Տպայլէի Le Royal պանդոկին մէջ, տեղի ունեցաւ ՀԱԳ 95-ամեակի պաշտօնական ճաշկերոյթը, ներկայութեամբ ՄԱՀԱԵ Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեանի, Հայ կաթողիկէ պատրիարքական թեմի օգնական եպիսկոպոս գեր. Հայր Գէորգ եպս. Ասատուրեանի եւ Լիբանանի թեմի առաջնորդ Նարեկ արք. Ալէքեանի ներկայացուցիչ Տ. Միքայէլ քին. Տէմիրճեանի, երեսփոխաններ Յակոբ Թերզեանի եւ Ժան Թալուզեանի, դպրոցիս եւ Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ պատասխանատուներու, շրջանաւարտներու եւ ՀԱԳ-ի բարեկամներու:

Աղօթք մատոյց Ա. Եկեղեցւոյ հովիւ վեր. Հրայր Զուլագեան: Ելոյթ ունեցան ճաշկերոյթի կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ, դպրոցի պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մարրիլեան, տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան եւ հոգաբարձութեան ատենապետ պր. Ներսէս Պաղտոյեան:

Հուսկ, վեր. Գարակէօզեան ուղղեց իր սրտի խօսքը: Գեղարուեստական բաժինը ապահովեցին Հուրի Աքարդեան եւ իրեն ընկերակցող նուագողները:

Հանդիսավարներն էին շրջանաւարտներ Աւօ Թիւֆինճեան եւ Սիլվա Սողոմոնեան:

**ՎԵՐԱՄՈՒՏ ՀԱԳ 96-ՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ**

**ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ ՕՐ**



Համաձայն աւանդութեան, այս տարի եւս 26 Հոկտեմբերին նշեցինք ՀԱԳ-ի հիմնադիրներու օրը, աշակերտութեան մէջ անոնց տեսիլքը, ինչպէս նաեւ դպրոցին վաստակին գիտակցութիւնը վառ պահելու մտադրութեամբ: Այս տարուան պատգամաբերներն էին շրջանաւարտ Գարմա Էքմէքճի եւ նախկին աշակերտ Միքայէլ Վայեճեան:

Դպրոցիս պաշտօնական վերամուտը տեղի ունեցաւ 25 Սեպտեմբերին: Վերամուտի պաշտամունքէն ետք, (պատգամաբեր՝ վեր. Հրայր Չոլագեան), տեղի ունեցաւ Լիբանանի եւ Հայաստանի դրօշակներու արարողութիւն, որու ընթացքին բարի գալուստի խօսք ուղղեց տնօրէնը: Ապա, աշակերտները ուղղուեցան դասարաններ, կարգ մը վարչական դասաւորումներու համար, հուսկ ուղղուեցան բակ, ուր ունեցան հաճելի ժամանց (ուսուցիչներու պատրաստութեամբ), հիփոսիփութիւն (Ծոնողաց վարչութեան կողմէ) եւ հայկական պարերու դասընթացք (պարուսոյց՝ օրդ. Գայիանէ Մաճունեան):

9-րդ եւ 12-րդ դասարաններու դասաւանդութիւնները սկսած էին 10 Սեպտեմբերին:

Մանկապարտէզի վերամուտը Հոկտեմբեր 1-ին էր:



**ՃՇՂՈՒՄ \_\_\_\_\_ ՃՇՂՈՒՄ**

«Լրափու»-ներու ԺԸ. տարի թիւ 3 եւ ԺԹ. տարի թիւ 3 հրատարակութիւններուն մէջ շրջանաւարտներու հունձքի թիւը թիրիմացաբար սխալ գրուած է:

Կը խնդրուի նկատի առնել որ 2016-2017 տարեշրջանին ՀԱԳ-ը տրուած է իր 90-րդ հունձքը, իսկ 2017-18-ին՝ 91-րդը:

**ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ**

21 Նոյեմբերին, ատենամարզանքով եւ տողանցքով նշուեցաւ Լիբանանի անկախութեան տօնը: 5-րդ դասարանի աշակերտները այս առթիւ պատրաստած էին Լիբանանը խորհրդանշող ուշագրաւ ձեռային աշխատանքներ:

Նոյն առիթով, Հայկազեան համալսարանի Ուսանողական գրասենեակը կազմակերպած էր նկարչական ցուցահանդէս մը, մասնակցութեամբ լիբանանեան դպրոցներու աշակերտներու: Մեր դպրոցի 10-րդ դասարանէն Եարա Եունէս եւ Այգ Արզումանեան եւս մասնակցեցան ցուցահանդէսին:



Անկախութեան նիւթով՝ Նախակրթարանի ձեռային աշխատանքները



Եարա Եունէս



Այգ Արզումանեան

4-րդ դասարանի աշակերտ Ալեքս Ծոզիկեան 2-րդ հանդիսացած է Saints Coeurs դպրոցի Ճիւտոյի մրցաշարքին:



## ԼՈՒՐԵՐ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԷՃԷՆ

### ՀԱԳ-Ի ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՊԱՏՈՒԱԲԵՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ 2017-18 ՏԱՐԵՇՐՁԱՆԻՆ

12-րդ դասարանի կենսաբանության բաժնի հինգ աշակերտներին հինգն ալ Լիբանանի պետական պաթալորեայի քննություններուն արձանագրեցին տպաւորիչ յաջողութիւն: Անոնք են՝ Փերլա Պասէթ (շատ լաւ), Ռիտա Աթուէ (շատ լաւ), Սերժ Թերզեան, Կէրի Լեփեճեան, Գաթրինա Տումանեան:

Իսկ 9-րդ դասարանի ԲՈԼՈՐ աշակերտները ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՄԲ յաջողեցան պրէզօվէի քննություններուն, արձանագրելով հետեւեալ բացառիկ արդիւնքը. Այգ Արզումանեան (շատ լաւ), Նարինէ Պաստաճեան (շատ լաւ), Սէլին Համմուտ (շատ լաւ), Աւօ Տէրտէրեան (լաւ), Գառնի Քէօզկերեան (լաւ), Արիժ Սիտանի (լաւ), Եարա Եունէս (լաւ):

*Կը շնորհաւորենք աշակերտները եւ անոնց ծնողները, ինչպէս նաեւ ուսուցիչները այս բացառիկ արդիւնքին համար:*

### ՎՐԻՊԱԿ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիւով, 2018-ի համալսարանական շրջանաւարտներու ցուցակին մէջ թիւրիմացաբար մոռցուած է շրջանաւարտ ԺԱՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ անունը, որ Յունիս 2018-ին LAU համալսարանէն ստացաւ Computer Engineering-ի BS վկայական:

*Կը շնորհաւորենք Ժանը եւ ծնողքը, ու իրեն կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:*

### ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄՆԵՐ



2017-2018-ի շրջանաւարտներէն Փերլա Պասէթ, որ պաթալորեայի պեպ. քննութեան յաջողած էր «շատ լաւ» յիշատակութեամբ, պարգեւատրուեցաւ Զաւարեան ուսանողական միութեան (26 Հոկտ.) եւ Լիբանանի աւեպ. վարժարաններու միութեան կողմէ (17 Նոյ.):

Վերջինին պարգեւատրուեցաւ նաեւ Ռըրա Աթուէ, նոյնպէս «շատ լաւ» յիշատակութեամբ յաջողելուն համար:

### «ԱՆ-ՆԱՀԱՐ» ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Իսուր մը աշակերտներ, ընկերակցութեամբ արաբերէնի ուսուցչուհի տիկ. Մարիա Ռահպանիի, այցելեցին «Ան-Նահար» թերթի խմբագրատուն: Այցելութեան ասարտին, անոնք դպրոցին կողմէ յուշանուէր մը յանձնեցին զիրենք հիւրընկալած խմբագիրին:



Թերթին 19/11/2018-ի թիւը նուիրուած էր Մանուկներու միջազգային օրուան: Այդ առթիւ թերթը լոյս տեսաւ մանուկներու, ի մէջ այլոց նաեւ մեր աշակերտներէն Յակոբ Գալուստեանի, Գէորգ Պաստաճեանի եւ Ղազար Մեսճեանի գրութիւններով:

ՀԱԳ միակ հայկական դպրոցն էր, որ մասնակցեցաւ այդ նախաձեռնութեան: Այլ աշակերտներու անգլերէն գրութիւններ լոյս տեսան թերթի կայքին մէջ:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԱ ԽԱԶՏՈՒՐԵԱՆԻ ՀԵՏ



ՀԱԳ-ի աշակերտները Երկուշաբթի, 19 Նոյեմբերին հանդիպեցան Արա Խաչատուրեանին հետ: Ան Արարատի, Էվերեսթի եւ տասնեակ այլ լեռներու գագաթները նուաճած է, ինչպէս նաեւ Մարսելլէն Երեան վազելով ջատագով հանդիսացած է համաշխարհային խաղաղութեան եւ

նպաստած է Հայ Դատի ճանաչումին: Արա խօսեցաւ իր փորձառութիւններուն, ինչպէս նաեւ անոնցմէ քաղուած առողջ ապրելակերպի պատգամներ տուաւ աշակերտներուն:

Աւարտին, տնօրէնը զինք պատուեց դպրոցի յուշանուէրով:



### ԵՐԵՒԱՆ-ԷՐԵՐՈՒՆԻ 2800-ԱՄԵԱԿ

ՀԲԸՄ-ի Հայկական առցանց համալսարանի (Armenian Virtual College) նախաձեռնութեամբ եւ իրենց հետ գործակցող դպրոցներու եւ անհատներու մասնակցութեամբ պատրաստուեցաւ առցանց ֆլեշմոպ մը, որուն ընթացքին տարբեր խումբեր եւ անհատներ երգեցին «Երեւան-Էրբունի»-ն, որ խմբագրուելով սփռուեցաւ համացանցի միջոցաւ: ՀԱԳ եւս մասնակցեցաւ տոյն նախաձեռնութեան, փիկ. Անի Պիլալեանի առաջնորդութեամբ եւ Ռայիօ Սեւանի գործակցութեամբ:

**Տիկնանց Ընկերային Յանձնախումբի ՊՏՈՅՏ**



Շաբաթ, 6 Հոկտեմբերին, Տիկնանց ընկերային վարչությունը ունեցավ իր հերթական պտոյտը, այս անգամ դէպի Թրիփոլի: Մասնակիցները այցելեցին հայոց եկեղեցին եւ դպրոցը, ունեցան նաեւ պտոյտ մը եւ հաճելի հաւաքական ճաշ մը:

Կը գնահատենք ժրջան տիկիններուն աշխատանքն ու նուիրումը:

**ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ**

*Այսու, մեր շնորհակալութիւնը կը յայտնենք ՏԻԿՆԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԻՏԱՆԵԱՆԻՆ, որ յաճախակի նուիրարութիւններով ու այլազան օժանդակութիւններով մեծապէս քաջալեր կ'ըլլայ դպրոցիս, յատկապէս Տիկնանց ընկերային յանձնախումբի ճամբով:*

**ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ**

- Պր. Համբարձում Թերզեան 1000 տոլար  
*Դպրոց իր այցելութեան առթիւ*
- Պր. Սարգիս Սիմիթեան 1000 տոլար  
*2018-ի իր փարեկան յատկացումը*
- Նախկին նպաստընկալ շրջանաարտ մը 2000 տոլար
- Children's Incorporate 117 տոլար
- Ճորճ եւ Վարդ-Վարս Մկրտիչեաններ 100 տոլար
- Տոքթ. և տիկ. Ռաֆֆի Էլմաճեան 150.000 լ.ո.  
*Արրահամ Էլմաճեանի յիշատակին*
- Տիկին Շաքէ Էլմաճեան եւ դստերը 100.000 լ.ո.



**ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ**

**Պարմուծեան Ակումբ**



**ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԶՄՄԱՌ**

Առաջնորդութեամբ ակումբի խորհրդատու դոկտ. Զաւէն Մարլեանի, ակումբի անդամներէն խումբ մը այցելեց Զմմառու Տիրամօր վանքը, ուր շրջեցաւ վանքի թանգարանէն եւ յարակից մասերէն ներս, ծանօթանալով այդ պատմական կառոյցին ու այնտեղ ծաւալուող գործունէութեան:

**Աստուածաշունչի Ակումբ**



**ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԶԻԱՐԱ**

Շաբաթ, 3 Նոյեմբերին, Աստուածաշունչի ակումբի անդամները, ընկերակցութեամբ իրենց խորհրդատու տիկ. Հռոյթ Եունիսէսի, այցելեցին հիւսիսային Լիբանանի Մզիարա ամառը, ծանօթանալու շրջանի պատմական եկեղեցիներուն: Մասնակիցները ունեցան նաեւ ընկերային հաճելի պահ մը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ \_\_\_\_\_ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

**Մ Ի Փ Ա Ն**

*Հայ Աւերարանական Գոյէճի 2017-2018 Տարեգիրք*

Ստանալու համար դիմել  
դպրոցի քարտուղարութեան



➤ 2001-ի շրջանաւարտ, քաղաքական գիտութեանց մէջ մասնագիտացած տիկ. Գարնա Էքսէքճի Լիբանանի վարչապետ Ս. Հարիրիի հետ կը գործակցի իբր Լիբանանի Նախարարաց խորհուրդի նախագահին միջազգային հարցերու եւ յարաբերութիւններու միատրի պատասխանատուն: Առ այդ, ան վարչապետին ընկերակցած է անոր արտասահմանեան այցելութիւններուն եւ առիթ ունեցած է ներկայանալու Հռոմի Պապին, ԱՄՆ-ի նախագահ Տ. Թրամփին եւ Ֆրանսայի նախագահ Է. Մաքրոնին:

➤ 1966-ի շրջանաւարտ, բանաստեղծ եւ արձակագիր Վեհանյշ Թէքեանի ծննդեան 70-ամեակին եւ կէտարեայ գրական վաստակին նուիրուած հանդիսութիւն մը տեղի ունեցած է 9 Նոյեմբեր 2018-ին



Կղէտեյի հանրային գրադարանին մէջ, կազմակերպութեամբ տեղոյն Համազգային ընկերակցութեան վարչութեան: Այդ առթիւ, 8 Նոյեմբեր 2018-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի շնորհաբաշխումով, Վ. Թէքեան, Քալիֆորնիոյ առաջնորդ Միշել արք. Մարտիրոսեանի ձեռամբ պարգևատրուած է Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանով, Առաջնորդարանի Միլիաեան դահլիճին մէջ:

➤ Հունգարական «Տանիպ» միջազգային մրցանքին, 16 խմբավարներու մէջ առաջին եւ գլխաւոր երկու մրցանակներուն տիրացած է ՀԱԳ-ի 1998-ի շրջանաւարտ մաէսթրօ Կարօ Աւեսեան: Ան այս մրցա-




նակին հիմամբ հրաւիրուած է իբր հիւր խմբավար 2018-2019 համերգային տարեշրջանի ընթացքին Պուտաիեշտի մէջ ելոյթ ունենալու «Տանիպ» սիմֆոնիք նուագախումբին հետ:

➤ 1948-ի շրջանաւարտ տոքթ. Վարդգէս Նաճարեան եւ իր տիկինը իրենց ամուսնութեան 60-ամեակը տօնած են Կղէտեյի մէջ 150 հրաւիրեալներու ներկայութեամբ: Հոն, իրենց անդրանիկ զասակը՝ Արա (Կղէտեյի նախկին քաղաքապետ եւ այժմ քաղաքային խորհուրդի անդամ) յայտարարած է, թէ իր ծնողքը 500.000 տոլար նուիրելով



կը հիմնեն ընտանեկան ֆոնտ մը, նպատակ ունենալով օժանդակել կրթական եւ առողջապահական կարիք ունեցողներու, մասնաւորաբար զինուորական ընտանիքներու՝ Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ:

➤ ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն, 1955-ի շրջանաւարտ դոկտ. Զաւէն Մարդեան, 1 Նոյեմբեր 2018-ին, լոյս ընծայեց «Հուսկ Բանք 1968-2017» գիրքը, որ կը պարունակէ այդ ժամանակաշրջանին ամսավերջի հանդէսներուն իր խօսքերը ուղղուած շրջանաւարտներուն:



Գիրքը լոյս տեսաւ մեկենասութեամբ տէր եւ տիկին տոքթորներ Նազարէթ (1970-ի շրջանաւարտ) եւ Անի (1974-ի շրջանաւարտ) Տարագճեաններու:



➤ 1969-ի շրջանաւարտ դոկտ. փրոֆ. Վահրամ Շէմմասեան Հակագեան համալսարանի Սփիռքի ուսումնասիրութիւններու կեդրոնի «Եզիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ հայերը»

գիտածոյովին (29 Մայիս), հանդէս եկաւ «Փորթ Մայիտի գաղթակայանին հիմնումը 1915-ին» նիւթով: Նոյն օրը 1982-ի շրջանաւարտ Տիկ. Լիմի Խունկանեան խօսեցաւ «Եզիպտոսի հայ ատեւ. համայնքը» նիւթին մասին: Դոկտ. Շէմմասեան նաեւ Հայկազեան համալսարանի



26 Մայիսի վկայականացք 2 խմբանահանդէսին գլխաւոր խօսողն էր:

➤ 10 Յունիս 2018-ին, ՀԲԸՄ-ի Տեմիքճեան կեդրոնին մէջ, 1960-ի շրջանաւարտ, Հայաստանի ամերիկեան համալսարանի այցելու դասախօս եւ ՀԲԸՄ Արեւմտեան Ամերիկայի շրջ. յանձնածոյովի նախկին ատենապետ եւ Միութեան Ամերիկայի նախկին վարիչ-տնօրէն Հայկ Մարրեան, ՀԲԸՄ-ի Լիբանանի Վեթերաններու եւ բարերարներու համախմբումին կազմակերպած վեթերաններու եւ աագ վեթերաններու վկայականաց բաշխումի հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր:

➤ 2014-ի շրջանաւարտ Քրիստին Շահինեան 25 Յունիսէն 31 Օգոստոս 2018-ին Հայաստանի մէջ կամուրաբար մասնակցած է «Դէպի Հայք» (Birthright Armenia) ծրագ-



րին, գործելով Վանաձորի շրջանին մէջ: Ստեփանակերտի մէջ ան գործած է «Լիարժէք կեանք» ոչ-կառավարական կազմակերպութեան հետ, իսկ Սպիտակի մէջ Սպիտակ-Հեյսինքի մարդկային իրաւանց խմբակին հետ:

➤ 20 Մայիսին Հայ կաթողիկէ Մեսրոպեան վարժարանի շրջափակին մէջ տեղի ունեցած Հայաստանի Ա. հանրապետութեան 100-ամեակի Լիբանանի Կեդրոնական մարմինին կազմակերպած մշակութային միացեալ հանդիսութեան բացման խօսքը կատարողն էր ՀԱԳ-ի 1979-ի շրջանաւարտ եւ դպրոցի հոգաբարձութեան ատենապետ Պրն. Ներսէս Պաղտոյեանը:

► 31 Մայիսին Պեյրոյի Ֆէնիսիա պանդոկին մէջ տեղի ունեցաւ Ամերիկայի հայ ատարարանչական ընկերակցութեան հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած ճաշկերոյթը, որուն ընթացքին ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Ընկերակցութեան նախագահ 1970-ի շրջանաւարտ Տոքթ. Նազարէթ Տարագճեանը: Նոյն ճաշկերոյթին, Հայկազեան համալսարանի խնամակալութեան ատենապետուհին պարգևատրեց նախկին ատենապետուհի 1974-ի շրջանաւարտ Տիկ. Անի Տարագճեանը իր ութամեայ անձնուէր ծառայութեան համար:

► ՀՄԸՄ-ի 100-ամեակի երեսնեան հանդիսութիւններուն (19 - 29 Յուլիս 2018), մեծագոյն նուիրատուութիւն կատարող 10 կնքահայրեր նշանակուեցան, որոնց շարքին էին ՀԱԳ-ի նախկին երկարամեայ աշակերտ Հրաչ Միսեռեան, 1967-ի շրջանաւարտ Ատոմ Թնճուկեան եւ 1966-ի շրջանաւարտ Հրաչ Մարութեան:

► 2005-ի շրջանաւարտ տիկ. Սարին Ճըրլեան-Տէմիրճեան, իր ա-



մուսինին եւ այլոց հետ Արարատ լեռը բարձրացած է 2018-ի ամռան:

► Երկարամեայ նախկին աշակերտ, մաէսթրօ Յարութ Ֆազլեան Պիքֆայայի մէջ 9 Յունիս 2018-ին, Մեծն Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.-ի քահանայութեան յիսնամեակի հանդիսութեան ընթացքին, Լիբանանի ազգ. ֆիլիարմոնիք նուագախումբը դեկավարեց:

► 2016-ի շրջանաւարտներ Լիլա Օհանեան եւ Դալար Հայտօսթեան Հայկազեան համալսարանի 2018-ի գարնան տեսչական պատուոյ ցանկին վրայ եղած են իրենց գերազանց արդիւնքներուն համար:

► 2015-ի շրջանաւարտ Շուշան Քէշիշեան լրիւ կրթանապատ ստացած է Անգլիոյ Եորք համալսարանէն, Միջազգային յարաբերութիւններու մէջ MA-ի ծրագրին հետեւելու համար:

► 1965-ի շրջանաւարտ, գործարար եւ ԱՄՆ Արեւմտեան ափի ՀԱԳ Շրջանաւարտից միութեան վարչական Թովմաս Տէօքմէճեան, Լոս Անճելոսի մէջ կայացած ՀՄԸՄ-ի հարիւրամեակի հանդիսութիւններուն պատուած է գնահատանքի յատուկ յուշատախտակով:

► 17 Մայիս 2018-ին, Նիւ Եորքի Առաջնորդարանի ցուցարահին մէջ հայկական այբուբենը գեղեցկօրէն ներկայացնող ձեռագործներու ցուցահանդէս մը տեղի ունեցած է կազմակերպութեամբ 1963-ի շրջանաւարտ արուեստարան տիկ. Շողակ Յովհաննէսեանի:

► ՀՅԴ Շուշի կոմիտէի կազմակերպութեամբ, 27 Մեպտեմբեր 2018-ին Միթի մոլի Սինեմա սիթիին մէջ ցուցադրուեցաւ Արցախի մասին «Յարատեւ կռիւ» ժապաւէնը: Ձեռնարկին բացման խօսքը յանուն կոմիտէին կատարեց 2002-ի շրջանաւարտ Վարդան Աճեմեան:

► Մեծագոյն Նիւ Եորքի Թէքէեան մշակութային միութեան վարչութեան դիւանի անդամներ, 1985-ի շրջանաւարտ տիկ. Հիլտա Քիւ-



րէճեան-Յարութիւնեան (ատենապետ) եւ երկարամեայ նախկին աշակերտ Վարդան Իլանճեան (ատենադպիր), 11 Հոկտեմբեր 2018-ին այցելած են ՄԱԿ-ի մօտ Հայաստանի մշտական ներկայացուցիչ Մհեր Մարգարեանին, իսկ Թէքէեան կեդրոնին մէջ պատուասիրած են Սփիւրքի նախարար Մխիթար Հայրապետեանը, Օգոստոս 2018-ին:

► 1992-ի շրջանաւարտ դոկտ. Հուրի Բիզանդեան 2018-2019 տարեշրջանին սկսած է պաշտօնավարել Պեյրոյի ամերիկեան համալսարանի Հիւանդապահութեան դպրոցին մէջ:

**ԽՕՍՔԿԱՊ**

Օ 2006-ի շրջանաւարտ Կրէկ Լէյլէյճեան, իօսքկապ կարարած է ամերիկաքնակ օրդ. Ստոս էլիյրի հետ, Պեյրոյ:

*Անցնող վեց ամիսներուն ՀԱԳ-էն շրջանաւարտներ եւ երկարամեայ նախկին աշակերտներ ազգային զանազան հանգամանքներով պաշտօններու ընտրուեցան: Կը նշենք թուականի կարգով:*

► 21 Մայիս 2018-ին Երեւանի մէջ կայացած Համազգայինի 8-րդ պատգամաւորական ժողովին, 1984-ի շրջանաւարտ փրոֆ. Մեպոս Այնթապլեան 2018-2022 քառամեակին համար Համազգայինի կեդրոնական վարչութեան անդամ ընտրուած է:

► 1 Յուլիս 2018-ին կայացած Լիբանանի թեմի Ազգ. երեսփոխանական ժողովի ընտրութիւններուն, 1971-ի շրջանաւարտ գոր. Փանոս Մանճեան Այնճարէն ազգային երեսփոխան ընտրուած է:

► 2 Յուլիս 2018-ին, ՄԱՀԱԵ միութեան 72-րդ համաժողովին, 1988-ի շրջանաւարտ Վեր. Հրայր Չոլագեան ընտրուած է Միութեան Կեդրոնական մարմինի անդամ եռամեայ շրջանի մը համար:

► 24 Օգոստոս 2018-ին ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութիւնը Լիբանանի Շրջանային վարչութեան անդամ նշանակած է երկարամեայ նախկին աշակերտ Պետիկ Լոճիկեանը:

► 28 Հոկտեմբեր 2018-ին, ՌԱԿ-ի Լիբանանի շրջանային 61-րդ պատգամաւորական ժողովին ՌԱԿ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան փոխատենապետ ընտրուած է երկարամեայ նախկին աշակերտ Միքայէլ Վայճեանը, իսկ խորհրդական՝ 2002-ի շրջանաւարտ Արմէն Վայճեանը:

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ** կը յայտնենք 2004-ի շրջանաւարտ եւ այժմու ծնողք պր. Վաչէ Կոբարեանին, որ դպրոցին նուիրեց Canon լուսանկարչական սարք մը:

**ՆՇԱՆՏՈՒՔ**

Օ 2008-ի շրջանաւարտ Յարութ Արթինեան նշանուած է օրդ. Արագ Կիրանեանի հետ, 24 Մարտ 2018-ին, Պեյրոյ:

## ԵՐԿՈՒ ՎԵՐԱՀԱՒԱՔ

9 Սեպտեմբեր 2018-ին, Նասսի Շրպլի ճաշարանին մէջ 1978-ի շրջանաւարտներէն եւ նախկին աշակերտներէն խումբ մը կէսօրուան հաւաքական ճաշ մը ունեցան, յիշելով իրենց դպրոցական օրերը: Օրուան պատուոյ հիւրն էր ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մարրլեան:



Ներկաներուն մէջն էին տէր եւ տիկ. Համբիկ Գեորգեան, տէր եւ տիկ. Վազգէն Մուղալեան, տիկ. Մայտա Քիրտեան, պր. Տարօն Տէր Խաչատուրեան, տէր եւ տիկ. Տիրան Մարրեան, տէր եւ տիկ. Սերժ Զաւաթաթեան, տիկ. Միրնա Գեորգեան, դոկտ. Սիլվի Էսքիճեան, օրդ. Ռիմա Չոլագեան, տէր եւ տիկ. Միմոն Թաշճեան, տիկ. Անի Կոստանեան, պրն. Գրիգոր Մանուկեան, տէր եւ տիկ. Վաչէ եւ Արլին Ադամեան: Տիկ. Մայտա Քիրտեան ի պատիւ հիւրին մենեթգեց «Սիրելի ուսուցիչ» երգը: Մասնակիցները արտասանեցին երախտագիտական խօսքեր, պատմեցին դպրոցական յուշեր: Ելոյթ ունեցաւ նաեւ պատուակալ տնօրէնը:



13 – 15 Յուլիս 2018-ին, 1971-ի շրջանաւարտներ եւ նախկին աշակերտներ իրենց տիկիններով եւ ամուսիններով հաճելի վերահաւաք մը ունեցան Լոս Անճելոսի մէջ: Ասիկա առիթ ընծայեց դպրոցական հին ու անուշ օրերը վերյիշելու: Ներկաներն էին՝ Աւագ եւ Սարբի (Արսլանեան) Աւագեան, տէր եւ տիկ. Վաչէ եւ Անի Պապիկեան, տէր եւ տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան, տէր եւ տիկ. Լեւոն եւ Հուրի Կալեան, տէր եւ տիկ. Ռաֆֆի եւ Արսինէ (Գալֆայեան) Կեօվճեան, տէր եւ տիկ. Օհաննէս եւ Յասմիկ (Հարմանտարեան) Օհաննէսեան, տէր եւ տիկ. Հայկ եւ Քարոլինա Կիլեաներեան, տէր եւ տիկ. Գեորգ եւ Անի (Վարժապետեան) Իսկենտերեան, տէր եւ տիկ. Սերգօ եւ Կրէյս Գասարեան, տիկ. Էտնա Սարգիս-Քիզիրեան, տէր եւ տիկ. Հրաչ եւ Լեւիլ Գրիգորեան, պրն. Յակոբ Սապունճեան, տէր եւ տիկ. Հրաչ եւ Հելկա (Մաղազեան) Սարգիս, դոկտ. Արա Թէքեան եւ պրն. Նշան Թովճեան:

Սոյն խումբի անդամները այս առիթով դպրոցի «Զաւէն Մարրլեան կրթական ֆոնդ»-ին նուիրեցին 3550 փոլար: Ցանկը փրփուած է ֆոնդի նուիրատուութեանց բաժինին մէջ:

## ՊՄԱԿ

• 2010-ի շրջանաւարտ Ալին Արթինեան պատկուցաւ պրն. Հայկ Չիֆթեանի հետ, 3 Օգոստոս 2018-ին Հայ կաթոնիկէ Ս. փրկիչ եկեղեցիին մէջ, Պուրճ Համլոնուր:

• 1986-ի շրջանաւարտ Արա Պահարեան պատկուցաւ փոքր. Շէրրն Եղիայեանի հետ, 25 Սեպտեմբեր 2018-ին, Մաղճոսաւանքի մէջ (Հայասարան):

## ՄԱՀ

† Հ.Ա.Գ.-ի 1978-1981 փարիներու առեւտրական գիտելիքներու այցելու ուսուցիչ Հրայր Հովիւեան (1955-2018) մահացաւ 15 Նոյեմբեր 2018-ին, յետ հիւանդութեան:



† 17 Հոկտեմբեր 2018-ին Պէյրութի մէջ յետ երկարատեւ հիւանդութեան մահացաւ 1954-ի շրջանաւարտ, գործարար եւ ՀԲԸՄ-ՀԵԸ-ի նախկին ղեկավարներէն Մայր Մարտիրեանը (1935-2018):

† 23 Յուլիս 2018-ին, Պէյրութի մէջ մահացաւ Նոյեմբեր 1993-էն Օգոստոս 2014 ՀԱԳ-ի փրկիչ Զուլալ Թազեանը (1957-2018), անողորմ հիւանդութեան հետեւանքով:



† 3 Յուլիս 2018-ին Ամերիկայի մէջ մահացաւ 1949-ի շրջանաւարտ վեր. Վահան Պետրիկեանը (1931-2018):

## ԲԱՄՏՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

- 2004-ի շրջանաւարտներ Վաչէ եւ Կրէյս (Քիրքեան) Կորստեաններ, 6 Յուլիս 2018-ին բախարատրուած են դուստրով մը՝ Օլիվիա, Պէյրութի մէջ:
- ՀԱԳ-ի նախկին աշակերտ, սպայ Արցախի Խօշեան եւ փրկիչը, 2 Սեպտեմբեր 2018-ին բախարատրուած են առջինեկ մանչ զաւակով մը՝ Վազօ:
- 2004-ի շրջանաւարտ Տիանա Ղալայինի եւ ամուսինը, Օգոստոս 2018-ին բախարատրուած են դուստրով մը՝ Ամերիկայի մէջ:

2011-ի շրջանաւարտ օրդ. Ալին Արթինեանի եւ պրն. Հայկ Չիֆթեանի պատկառութեան առթիւ ՀԱԳ-ի տնօրէնութիւն, ուսուցչակազմ եւ պաշտօնէութիւն 150.000 լ.ո. կը նուիրեն դպրոցին:



ՋԱՆԱԶԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՒՆՆԵՐ



ՀԱՅ ԳԻՐՔԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ - ԱՆԹԻԼԻԱՍ



DINO CITY



ՀԱԳ-Ի ՄԱՆԿԱՊԱՐՏԷՁ



PARCOURS DE SAVEURS



HIKING

**ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ**

ՀԱԳ 95-ԱՄԵԱԿի ճաշկերոյթին կադարուած են հետեւեալ նուիրարութիւնները:

Ճնորհակալութիւն բոլորին:

(Գումարները ամերիկեան փոխարով են, բացի եթէ այլապէս նշուած են):

Մի ոմն	5000
Տիկ. Վիլմա Հըրմէզ	3000
Տէր եւ տիկ. Յարութ Միսիրեան	2000
Մի ոմն	1500
Տէր եւ տիկ. Ժագ Էքմէքճի	1200
Տէր եւ տիկ. Հրաչ Հասըրճեան	1000
Տիկ. Թէնի եւ Իրմա Հասըրճեան	1000
Տէր եւ տիկ. Արա եւ Ռուպի Աթայեան	1000
Մի ոմն	1000
Մի ոմն	1000
Մի ոմն	1000
Մի ոմն	600
Տէր եւ տիկ. Սկրտիչ Յ. Պուլտուքեան	500
Տէր եւ տիկ. Սարգիս Սիմիթեան	500
Պր. Աւօ Թիթիւնճեան	500
Պր. Բիզանդ Այվազեան	500
Պր. Անդրանիկ եւ օրդ. Նելլի Այվազեան	500
Տիկ. Սիզի Մելքոնեան	500
Մի ոմն	500
Մի ոմն	500
Պր. Շահէ Խաչատուրեան	300
Տէր եւ տիկ. Գէորգ եւ Անահիտ Փօլատեան	300
Տէր եւ տիկ. Միսաք Ներսէսեան	200
Տէր եւ տիկ. Վազգէն Կիրճեան	200
Տիկ. Սիլվա Ֆաթթալ	200
Մի ոմն	200
Մի ոմն	200
Տէր եւ տիկ. Մասիս Ալեքսանտրեան	100
Օրդ. Անի Պունճիքեան	100
Դոկտ. Երուանդ Քասունի	100
Մի ոմն	100
Մի ոմն	100
Տէր եւ տիկ. Նորայր եւ Լարա Գարամանուկեան	100
Մեթր Սթելլա Սուլթան	100
Մի ոմն	400,000 Լ.Ն.
Մի ոմն	300,000 Լ.Ն.
Մի ոմն	300,000 Լ.Ն.
Տիկ. Լորիս Տօնապետեան	100,000 Լ.Ն.

<b>ԽՈՍՏՈՒՄ</b>	<b>Մի ոմն</b>	<b>500</b>
Մի ոմն	1000	Մի ոմն 500
Մի ոմն	500	Մի ոմն 500

**1967-Ի ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐՈՒ ԼՍԱՏԵՍՈՂԱԿԱՆ ՍՐԱՀԻ ԾՐԱԳԻՐԻՆ**

Շրջանաւարտ դոկտ. Արա Յովհաննէսեան 500 տոլար

**«ՍԻՓԱՆ»-ԻՆ**

Տիկ. Անայիս Պարսումեան (ԱՄՆ) 100 տոլար

«Լրատու»-ի նախորդ թիւէն ի վեր շնորհակալութեամբ սրացանք հետեւեալ նուիրարութիւնները զանազան բարերաներէ, բարեկամներէ եւ հասարակութիւններէ:

Վարձըը կադար բոլորին, յանուն Հայ Աւեր. Գոլճի յարարեման եւ պայծառութեան իրենց բերած նպաստին համար:

Բարերար Ռաֆֆի Մանուկեանէն իր տարեկան յատկացումը 14.200 տոլար

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան դպրոցներու օժանդակութեան հարիրամեակի ծրագիրէն 8963 տոլար

WCM-էն 4126 տոլար

ՀԲԸՄ «Ձաւէն Մարդեան» մրցանակէն 2486 տոլար

**«ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ՄԱՐԸԼԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏ»-ԻՆ Ամերիկայի Արեւմտեան Ափի**

**ՀԱԳ ՇՐՋ. Միութեան միջոցով** (ամ. տոլար)

Պր. Սինան Սինանեան	1500
Տէր եւ տիկ. Աագ եւ Սալբի (Արսլանեան) Աագեան	500
Տէր եւ տիկ. Հրաչ եւ Հելկա (Մաղաքեան) Սարգիս	500
Տէր եւ տիկ. Սերգօ Գասարճեան	500
Տէր եւ տիկ. Հայկ Կիլեսերեան (Մեքսիքո)	300
Տէր եւ տիկ. Ռաֆֆի եւ Արսինէ (Գալֆայեան) Կէօվճեան	1250
Տէր եւ տիկ. Վաչէ Պապիկեան	200
Տէր եւ տիկ. Յարութ Տէր Դաւիթեան	200
Տէր եւ տիկ. Լեւոն Կալեան	200
Տէր եւ տիկ. Հրաչ Գրիգորեան	200
Դոկտ. Արա Թէքեան	200
Տէր եւ տիկ. Օհաննէս եւ Յասմիկ (Հարմանտարեան) Օհաննէսեան	100
Տիկ. Էտմա (Սարգիս) Քիզիրեան	100
Պր. Նշան Թովճեան	100
Տէր եւ տիկ. Գէորգ եւ Անի (Վարժապետեան) Իսկենտրեան	100

**Ուղղակի դպրոցին**

Տէր եւ տիկ. Ռաֆֆի եւ Անիթա Ճահիլեան (ԱՄՆ)	1000
Տիկ. Անի (Կոստանեան) Կրահամ	500
Պր. Յարութ Ներսէսեան (Հայաստան)	200
Պր. Համբիկ Գէորգեան (Լոնտոն) (2-րդ անգամ)	100,000 Լ.Ն.
Տէր եւ տիկ. Վահէ եւ Սինթիա Թովմասեան (Աւստրալիա)	100 ամստր. տոլար

**«ԼՐԱՏՈՒ»-ԻՆ**

Պր. Յարութ Միսիրեան (Լիբանան)	100 տոլար
Տիկ. Անայիս Պարսումեան (ԱՄՆ)	100 տոլար
Տէր եւ տիկ. Վահէ եւ Սինթիա Թովմասեան (Աւստրալիա)	50 ամստր. տոլար
Տիկ. Անահիտ Գոգորեան-Պետիկեան (Ֆրանսա)	100 եւրօ

Խմբագիր՝ ՏԵՐԵՍ ՊՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԻՆԵՇԼԵԱՆ  
 Խորհրդատուներ՝ ՏԻՐ ՆԵՐՍԵՍ ՊԱՐՏՈՅԵԱՆ  
 ՏԻՐ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ  
 Էջաղրում՝ ԱՍԻ ՔԵՍԵՆԵԱՆ-ՊԱՍԵԹ  
 Ս.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՎԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԿ

**Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE**  
 P.O. Box 3672-Beirut  
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469  
 E-mail: A\_E\_C@cyberia.net.lb  
 Website: aecbeirut.edu.lb  
 Facebook: Armenian Evangelical College